ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 դեկտեմբերի 2024 թվականի թիվ 345 – Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-րդ մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի ապրիլի 18-ի N 567-Ն որոշումը՝

ո ր ո շ ու մ եմ.

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների պետական ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունների փոփոխությունները՝ համաձայն հավելվածի:

2.Պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրեններին՝ կանոնադրության փոփոխությունը ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստր՝ պետական գրանցման:

ՀԱՅԿ ՂԱԼՈՒՄՅԱՆ

2024-12-13 14:54:41 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

2024թ. դեկտեմբերի 13
ք.Իջևան

«Հավելված»
ՀՀ Տավուշի մարզպետի
13 դեկտեմբերի 2024թ. թիվ 345 - Ա որոշման

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1.«ՀՀ Տավուշի մարզի Այգեհովիտի միջնակարգ դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ

2.«ՀՀ Տավուշի մարզի Բարեկամավանի միջնակարգ դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ

3.«ՀՀ Տավուշի մարզի Վերին Կարմիրաղբյուրի միջնակարգ դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ

Գլխավոր քարտուղար՝ Արման Գևորգյան

13.12.2024

X

ԱՐՄԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Signed by: GEVORGYAN ARMAN 2412760241